

የጥቅም

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱԺԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գողարիոյ համար Տարեկան 12 ֆր.
 » » Վեցամսեայ 6 ֆր.
 Կապուստիկի համար (երկու քիչ մեկ
 ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
 Բերրիկայի » 2.60 տոյ վեցամս 1.50

ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով

ԽՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ « ԻՐԱՆԻՆԻ » ԼՐԱԳՐՈՑ . — ՎՍ ԻՆԱ (Պուլկարիա)

Редакция на вѣстникъ

„И р а в у н к ъ“

ВАРНА (България)

Rédaction du journal -

„I r a v o u n k“

V A R N A (Bulgarie)

Խնայարարական ուղղեալ գրութիւնք
էս չէն յրկուր եւ յարմար դասում-
ները միայն կը հրատարակուին աւ-
ելցուցիկ կամ ձեռնարկ:

Դանուցման տոյր 20 սանթրիմ. երե-
սէն տեղի աւագաններու համար 20 0/0
գեղջ կը լինի:

"ԹԱՆ"Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ

ՀԱՂԻ Կ. ԳՈԼՍԻՑ ՄԷՉ

Շահին ճանբորդութիւնը ի կ.
Պոլէս արժանի է ուշադրութեան
բանի մը կողմէ :

Սյուլիման Ապտիւլ Համիտ , հա
կառակ այն մեծարանքնիրուն զորս
ամենամօտ անցեալը յայտնապէս
մոռցած տէրութիւնները , մէկը
միւսէն աւելի , չռալլել ջնանցին
իրեն՝ իր գահակալութեան յոբել-
եանին առթիւ զեկամակուլթէամբ
դիտած է , կըստի , թագաւիր
զլիւռ մը , կոմ , վիհապետական
գերդաստանէ իշխանազունի մը
բացակայութիւնը արտակարգ դեպ
պանութիւնից մէջ :

Պապարիւն գիտողի մը համար խորհրդածութեան առատ նիւթ կընծայէ այն հակապատկերը որ կը տեսնուի կոտորածները դադարեցնելու և տնտես կրկնութիւնը արգիլելու համար երբեմն անգոր համաձայնութիւն մը կազմող Եւրոպայի դիրքին և աճող արգի փութկոտ մտերմութեան միջև զոր կուտայ իր յարգանքները Սուլթանին մատուցանելու մասին : Անգլիոյ մէջ շատեր չի թերացան յիշելու ուրիշ պատմական լեզուն , որ լորտ Սոլլաքէրի գործածեց 1895ի Լորտ քաղաքապետին հաջկերով թին մէջ , և այդ լեզուն դէմ յան դիման բերելու յօրտին 1900-ին Սուլթանին ուղղած ջերմագին շընորհաւորութեանց , ինչպէս նաեւ Միլիերկականի նաւատորմին բարձրագոյն հրամանատարին իբր յատուկ պատուիրակ եւ Պոլիս զըրկուելուն հետ :

Ու ռք կ'անգիտանայ այս փոփոխութեան պատճառը, Ամենա. մաքուր բարոյականը չէ դիւանա. գիտութեան ընթացքին ուղղու. թիւն տուողը .

Երբ անհամաձայնություններ չկան
լատուած եւրոպական համաձայ
նութիւնը ակներեւ անցոր ԳԵՄ.
նուեցաւ, երբ թեւալիոյ պատե
րաւոր օժանեան զէնքերուն, քիչ
մը փառ տուաւ, երբ նիյոս կայո.
ԲԸ, որ աւելի Գերմանական քա.

գործականությունը և վաճառականությունը չափերով քան մարդասիրությունը գողափառներով կրքազգե՛ր, բա՛ղէ ի բաց Սուլթանի մտերմութիւն ցոյց տուաւ, միւս արեւմտեան տէրութիւններն ալ յարմար դատեցին՝ ալիւս կշտամբականի տեղ մտերմական լինու գործածել և քաղաքական «զէն ու շա՛ն»-ի հաշուսն անցնել քանի մը հազար դիակ աւելի կամ պակաս :

Անկէ ի վեր թուրքիւ զօրսա
նակ տէր լծեանց խրատական քա
րոզներուն հեթարկուելու, անոնց
չահախնդիր դիտումներուն առար
կան եղաւ : Այլ պատասխանատը
ւոլծեանց խնդիրը, ոչ բարենորո
գումներու և ոչ Պէպինի դշնա
գրին զործարկածան խնդիրը,
ալ երևան չելան : Իւրոպա ուրիշ
խնդիրներ ունէր կարգադրելիք :

Կ սուսվարութեանց գիրքին մէջ
առաջ եկած փոփոխութեան լաւա-
գոյն ապացոյցը առ է որ երբեմն
երբեմն մինչեւ Եւրոպայ կը հասնի
արձագանքն աշխարհի դէպքերու
որոնք շատ քիչ կը տարբերին,
1894-95ի արեան գեղի յորդումը
Սասունի մէջ կանխող դէպքերէն
և սակայն ոչ ոք ամենափոքր ու-
շադրութիւն մը կը դարձնէ ա-
նոնց :

Հիպատոսական տեղեկագիրներն հաստատեցին հայ գեղի մը բընակիչներուն կոտորուիլը : Նոյն իսկ կ. Պոլսոյ մէջ անհամար ձերբակալուած իններ տեղի կունենան հայերուն , Երիտասարդ Թուրքերուն և իւլէմաներուն մէջ : Քաղաքակիրթ աշխարհը որ արդէն մոռցած կերեւնայ այն սոսկալի տագնապը , ուր քիչ մնաց զինքը պիտի նետէին համանման դէպքեր , բնաւ տրամագրուած ըլլալ ցոյց չի տար իր գործերէն և հաճոյքներէն տարբեր բանով մը զբաղելու :

Շատ շատ՝ բոլորովին գայլթակ-
ղեցուցիչ պատահար մը կրնայ
արթնցնել դիւանապիտուծիւնը,
ինչպէս էր 1896ի զլխաւոր դա-
հիճներէն մէկուն հաշէպի վալի
անուանուիլը : Միաբանութիւնը
խնդրոց կ'արգին մէջ զրուած է :
Ա'լ դիւանական պայքար չին ու-
զեր : Գործերը Եւրոպայի ներկա-

յացողիչ՝ երուն գործունէութիւնը
կը ապառնէ կորուստները այսին-
քն արածուածութիւնները կը պահանջեն
փոխադարձ լաւ վարմունք , հաճո-
յակատարութիւն , քիչ մը այն-
մարդասիրական ներողամտո՞ւ-
թեան կարգէն որուն անուշիկ կո-
հակներուն ներքեւ կը խղճուին
վէճի առարկաները :

Այս է յօտկոնիշը արն նոր շրթ
 Զանին որ բացեց հեղա թուրքիոյ և
 Եւրպայի , յարբերութեանց մէջ
 Կի,օմ կայսեր թարեպաշտ ուխտաւ
 գնացութենէն ի վեր Ո՛. Երուսա-
 ղէմ , Կրնանք ըսել թէ Սուլթան
 Ապօղիմ ճամփոյ յարեանմը այս
 շրջանին գազաթնակէտն եղաւ :

Քրիստոնեայի աշխարհին բուր-
վհնապետները և պետութեանց
գլուխները իրարու հետ մրցեցան
սիրալիր մեծարանքներով հանգէպ
այն ինքնակալին, զոր Պահպանո-
ղական Անգղիոյ պահպանողական
նախարարապետը պատմութեան
վրիժառու ոգիէն քաւապարտուած
յայտարարեց հանդիսաւորապէս, 5
տարի սուղ Բան մը միայն կը
պսակել հաւատացեալներու հրա-
մանապետին յաղթանակին և ու-
րախութեան, ինքնակալի մը կա-
խական իշխանազունի մը ներկա-
յութիւնը :

Սակաւն աւոր տեղ ահաւասիկ
որքաննրու արքան, Պարսից Շա-
հն է որ կերթայ իր այցելու-
թիւսմբը պատուել Սուլթանը, եր-
կու վեհապետներու այս հանգի-
պումը անհուն զորքին մը առա-
պիտի բերէ իսլամ աշխարհի մէջ

Ապտիլ Համիտ և իր հիւրեր
խլամ հզորագոյն պետութեանց եր-
կու գլուխներն են: Առաջինը Խ-
լիֆ է, աշխարհի վրայ մարդարեւ
ին յաջորդը՝ բոլոր ուղղահաստ
մահմետականներուն համար: Երկ-
րորդը զխաւոր ներկայացուցիչն
է այն մեծ հերձուածին որ իսլա-
մութիւնը երկու մասի կը բաժնէ
Ալիի տան անողոք քանդումէն
Մուհամմէտի նրկու թողերուն, Հի-
սէյիի հասանի այն կոտորումէն ի
վեր, զոր Պարսիկները կը տօնեն
տոհակ մը խորհրդաւոր խելայե-
ղու ժեմար:

իսլամական երկնքին այս զոյգ
մը մրցակից աստղերուն իրարու
հանգիպումը իր շահեկանութիւնը
ունի: Նախ երկու վեհապետեն
բուն միջիւ հեն պակսիր ոչ մեր

ձեռքման կէտեր, ոչ ալ վիճաբանան
թեան առարկաներ, երկիրներու
սահմանակցութիւնը և թափառիկ
ֆէւերտերու արշաւանքները զժուա
բայոյժ խնդիրներ կը յարուցա
նեն, վերջապէս թէ՛ Թուրքիա և
թէ՛ Պարսկաստան կը տեսնեն որ
երկու մրցակից ազգեր, Ռեզգիա
և Յուսիա, աչքերնին իրենց վրայ
տնկած են և իրարու ձեռքէ յա
փշտակել կը ջանան զիրենք, միշտ
աւելի մօտենալով իրենց սահմաննե
րուն և երկնազալի յարատեւու
թեամբ գործադրելով ճարտարա
րուեստական և վաճառակոնակոն
քաղաքականութիւն մը, որ տա
կաւ աւելի կը թափանցէ ու կը
տիրէ երկու երկիրներու մէջ։ Իս
յամ ինքնակոններուն միջև խօսակ
ցութիւնը թող ու որոշ հանգա
մանքէ զուրկ չի պիտի քլայ։

ԱՐԳԱՐԻ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ
ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՆԸ

Ժամանակէ մը ի վեր օտարադղի եւ
Հայ բանասէրներու ու գիտնականներու
գրադուրմ եղած է նորագիւտ արձանա-
դրութիւն մը, զոր գտած է Բոօֆէսէ-
օր Պահրման ուր Վիէննայի Համալսարա-
նին կ'զգմէ պեղումնիւ կը կատարէ
Այս արձանագրութիւնը գտնուած է
Եփեսոսի մէջ (Այա—սուլաք) բլուրին
վրայի թափալուրջ յատուկ հին պալա-
տի մը գրանւ վրայ :

Այդ արձանագրութեան թարգմանութիւնը «Լանասէր»էն առնելով կարտատպենք :

Արգարի նամակը Յիսուսի ուղղեալ
«Արդար Ուքամա, իշխան է.
դեսոյ, Յիսուսի բարեբարի փրկիչ
որ հրեայոր ի քաղաքին Երուսա.
ղէմացոյց, Ողորն :

« Դուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ, որ լինին ի ձեռն առանց դելլոց և արմատոց. զի որպէս ասի՝ տաս գու կուրաց տեսանել և կաղաց գնալ, և զորորտս սրբես և զայստ պիղծս և դեռ հասնես, և որ միանգամ չարչարեալ են ընդ երկար հիւանդութեամբ բժշկես գու, և զմեռեալս յարուցանես»։

Եւ իբրեւ լուալ վասն քո զայս աս մենայն, եզի իմտի իմում մի երկուց կամ թէ գու (Յիսուս) Մատուցոյ

իցես և իջեալ յերկնից և գործես զայդ. և կամ (թէ դու) որդին Աստուծոյ իցես և իջեալ յերկնից առնես զայդ: Արդ վասն այսորիկ զրեցի ես ազաչեմ զքեզ, զի աշխատ լիցիս և եկեացես առ իս, և բժշկեսցես զհիւանդութիւնս զոր ունիմ ես: Եւ առ լուս զի հրէայք տրտնջին զքէն և կամին չարչարել զքեզ: Բայց քաղաք մի է իմ փոքրիկ եւ գեղեցիկ, եւ բաւական է մեզ երկոցունցս:»

—Պատասխանի թղթոյն ի Տեառնէ ի ձեռն Արամիայ Սուր. հանգակի առ Աբգար իշխան:

«Երանի իցէ, Աբգար, այնմիկ որ հաւատայն յիս երբ ոչ իցէ տես. եայ զիս, զի գրեալ է վասն իմ այսպէս, զի որք տեսանիցեն զիս, ոչ հաւատացեն յիս, եւ որ ոչն տեսանիցեն, նոքա հաւատացեն և կեցցեն: Իսկ վասն այսոր զի գրեցեր դու առ իս գալ ինձ առ քեզ. միշտ աշխատէ ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես, և իրեւ կատարեցից զամենայն ինչ վերացայց առ այն որ առաքեացն զիս: Եւ յորժամ վերացայց՝ առաքեցից քեզ մի յաշակերտաց աստի իմոց, որ բժշկեսցէ զցաւս քո եւ կեանս տացէ քեզ և քոյոցդ որպէս և քաղաքիդ. մի երբէք պղծեսցէ որ թշնամիաց քոց զիշխանութիւն դորա:»

Աբգարի և Քրիստոսի միջեւ աւանգական թղթակցութիւնը շատ գիտնականներ սուտ կը հանեն: Այս նոր գիտնիս սղ հաւատք ընծայողները շատ քիչ են. այս մասին յարգելի բանասէր տիար Թ. Բասմաջեանի կարծիքն այ շատ աննպաստ է, և իր գլխաւոր աւարկութիւնները հետեւեալներն են:

Նախ Աբգարեան թղթակցութիւնը հիմէն կեղծ է ու գոյութիւն չունի ըսելէ վերջ, յարգելի բանասէր սա տրամաբանական և գիտական հարցերը մէջտեղ կը բերէ:

«Եթէ արձանագրութիւնը կեղծ չէ և Քրիստոսի ժամանակակից է, նախ՝ ինչ գործ ունի Եփեսոսի մէջ փոխանակ Եղեմիա գտնուելու. երկրորդ՝ ինչո՞ւ յունարէն գրուած ըլլայ — և այն Դորիական յունարէն — փոխանակ գրուած ըլլալու արամեան, որ Պաղեստինի մէջ տիրող լեզուն էր այն ժամանակ. երրորդ՝ հնագրական տեսակէտով արձանագրութեան մէջ գործածուած ոտները Երրորդ դարու մէջ գործածուած ձեւերը կը ներկայացնեն. իսկ չորրորդ և ամենակարեւորն՝ Եփեսոսի այդ պալատը՝ որուն աւագ դրան վրայէն գրտնուած է այս արձանագրութիւնը կառուցուած է Երգ դարուն մէջ, Ուստի տիար Բասմաջեան իր համոզումը կը յայտնէ թէ այս արձանագրութիւնը օրինակուած է Եւսեփիոսի Եկեղեցական Պատմութեան նախնական օրինակի մը

վրայէն և զետեղուած է հին իրեւ հմայք յանասան պահպանութեան արքայական պալատին, — ինչպէս կ'ընեն շատ անգամներ խաչ մը կամ թէ ուրիշ սուրբի մը պատկերը քանդակել տալով: Եւսեփիոսի գալով, սա իր կարգին այս մասին մեզ աւանդած տեղեկութիւնները քաղած է անվաւերաւ կան գրքէ մը որ կ'ընծայուի Լաբուրնիայ, կըսէ բանասէրը:

Վիեննայի Մխիթարեան հայրերն ալ գրեթէ նոյն կարծիքը կը յայտնեն և Թիսուռի նոմական վերջի մասը լուրջովին վերջը աւելցուած է կըսեն: Մխիթարեանք Աբգարի Արշակունեան հայ իշխան մ'ըլլալն ալ կը հերքեն:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Արարիկ, 1 Հոկ.

Ֆրանսայի սարսափը

Երէկ թերթերը հրատարակեցին Տրէյֆուսի մէկ նամակը, որ ուղղած էր, այդ նոխկին սպան Ֆրանսայի յայտնի ծերակուտական. ներէն Պարոն Թարրիէօյի: Այդ նամակին մէջ, զինուորական երկու տարբեր ատեններէ դատապարտուած սպան իւր որոշումը կը յայտնէ ծերակուտականին, իր խնդիրը վերականգնել, քիչ ժամանակէն, այսինքն Յուդահանգէրի փակումէն անմիջապէս յետոյ:

Մեր վերջին թղթակցութեան մէջ, անդողակի կերպով ըսինք թէ Յուդահանգէսէն յետոյ Ֆրանսայի և մանաւանդ Բարիզի մէջ զտնազան եղելութիւններ տեղի պիտի ունենան:

Բայց այդ նամակի ազդեցութիւնը սարսափելի եղաւ, ամբողջ Ֆրանսան ահ ու դողի մէջ է իմանալով որ այդ ողբալի դատը որ վերջնականապէս լմացած, աւարտած և մոռցուած կը կարծուէր, նորէն պիտի սկսի, Ֆրանսան բաժան բաժան ընելու, մընեոյն ազգին պատկանող անձինքը իրարու դէմ հանել, թշնամացնելու և գոնցէ ով գիտէ, այս անգամ, իրարու առիւն մտնելու:

Մեծ դժբաղդութիւն մը պիտի լինի Ֆրանսայի համար այդ խնդրոյն վերակուումը, թէ քաղաքականապէս և թէ տնտեսապէս, քաղաքականապէս վասնզի հասարակականութիւնը մեծապէս հարուած. ներու պիտի ենթարկուի և շատ պիտի լքուի եթէ աւելի հեռի չիլ. թայ ինչ որ անկարելի բան մը չիլիւր մեզ:

Մենք - Ֆրանսայի ժողովրդեան բոլոր խաւերուն մէջ մտածելով ենք և իմացած ենք անոնց մը տածելու եղանակը, շատ տխուր հետեւանքներ կը տեսնենք քաղաքական տեսակէտով, այդ վերակուումին մէջ. Կալով տնտեսականին, այս ալ առաջին չափ վտանգներ պիտի կրէ, մտքերու իրարանցումով. Ժողովրդեան իդային դրութեան գըր

աւելովը բոլոր գործերն պիտի դադրին, ինչպէս եղաւ խնդրոյն ժամանակ, վաճառականութիւնը պիտի վնասուի, օտարականները խոյս պիտի տան Բարիզէն:

Ահա այս պատճառներուն համար է որ բոլոր թերթերը, այսինքն անոնք որոնք ամեն բանէ առաջ Ֆրանսայի տնտեսութեան և շահուց վրայ կը մտածեն սարսափած են և իրաւամբ:

Կառավարութիւնը ինչ դիրք պիտի բռնէ եթէ երբէք այդ թաղեալ կարծուած խնդիրը նորէն երևան գայ. առ այժմ չ'գիտցուիլ, բայց ինչ որ աներկբայելի է, այն է թէ կառավարութիւնն ալ ժողովրդին չափ սարսափած է այդ լուրէն:

Բարիզի Հայոց մատուռը

Քանի մը տարիներէ ի վեր մեր թերթերը շատ անգամ գրեցին Բարիզի մէջ Հայկ. մատուռի մը շինութեան վրայ, մի քանի անգամ լուրեր տարածուեցան թէ արդէն պէտք եղած գումարը հաւաքուած է շինութեան համար եւ թէ տեղն ալ որոշուած է, ոմանք նոյն իսկ տարօրինակ լուր մը տարածեցին մի քանի ամիս առաջ, իբր թէ Ֆրանսական կառավարութիւնը շինութեան տեղն շնորհած է Բարիզի հայ գաղթականութեան բայց բոլոր այդ լուրերը անհիմն էին և անոնց տարածուելէն քանի մը օր յետոյ հերքուեցան: Իրաւէր թէ դրամ հաւաքուած է մատուռի մը շինութեան համար բայց մինչեւ հիւսիս հազիւ քանի մը հազար ֆրանք հասնելու է:

Արդ երկու շաբաթներէ հետէ Հայկ. մատուռի մը շինութեան ծրարները իրականանալու վրայ է. Թիֆլիսահայկ. յայտնի հարուստ Պ. Մանթաշեանը մօտ 15 օրերէ ի վեր Բարիզ կը գտնուի. Բարիզի մատուռն հոգաբարձուները, և մի քանի ազդեցիկ անձնուորութիւններ ներկայանալով ինչալ պարոնին, խնդրած են որ ինքը ստանձնէ Հայկ. մատուցի մը շինութեան բոլոր հոգին ու ծախքը: Մենք հաստատ տղրիւններէ իմուցանք թէ Պր. Մանթաշեան հաստատական խոստում բերի է Բարիզի մէջ հայ մատուռ մը շինելու իր ծախքով:

Ուրեմն այսօր հաստատապէս կըրնանք ըսել թէ Պր. Աղեքանտը Մանթաշեան Բարիզի մատուռը վերջապէս շինել պիտի տայ. արդէն հաւատարակտական յատակաշինքը շինուած կամ նկարուած է, չենք պիտի բաղկանայ մատուռէ մը և քովը՝ առաջնորդարանէ մը: Պր. Մանթաշեան ծախքէ չքաշուի կըսեն, և կուզէ որ լաւ բան մը շինուի լաւ տեղ մը, ինք փափաք յայտնի է կըսեն որ մատուռը շինուի Եան Վիլիզէի կողմը (այդ կողմերու հողը չափուլանց թանկ է, մէկ քառակուսի մէթրը հազարներ կարժէ) որպէսզի Բարիզի գաղթականութեան ամեն խաւերուն դիւրին լինի հոն երթալը:

Թէ քանի՞ հարիւր հազար պիտի ծախսուի այդ շինութեան համար, առ այժմ կարելի չէ բան մը ըսիլ. բայց եթէ իրօք Եան Վիլիզէի կողմը պիտի լինի պէտք

է առնուազն մէկ միլիոնը աչքի առնուլ. բայց քանի որ Պր. Մանթաշեան յոնձն կառնու բոլոր ծախքը հոգալ, այդ գումարը բան մը չէ անոր համար:

Հայերէն նոր քերթ ո՛ւալ

Ամենահաստատ ազդեցութիւն կիմանաք թէ առաջիկայ յունուար ամիսէն սկսած Բարիզի մէջ նոր թերթ մ'ալ պիտի հրատարակուի «Ժամանակ» անունով. Պիտի հրատարակուի երկու ամիսը անգամ մը, յետոյ ամսական հանգէսի պիտի վերածուի:

Այդ հանգէսը պիտի մտցնէ մեր մէջ, նոյալ թիւն մը որ հոռութիւն պէտք է լինէր. հանգէսին մէջ հրատարակուող բոլոր յօդուածներուն համար գրամական վարձատրութիւն պիտի լինի յօդուածագրին, բան մը որ մեր թերթերէն և հանգէսներէն շատերը գոնց կը նեն մինչեւ հիմայ: Այս միջոցով հանգէսի էջերէն դուրս պիտի մընան այն փութկոտ գրողները կամ սկսնակները, որոնք իրենց անուր տպագրուած տեսնելու փափաքէն տոչորած, թերթերու էջերը կը բռնեն և մեր յայտնի գրողներուն կը ֆուսան նիւթականապէս:

«Ժամանակ» պիտի լինի պատկերազարդ և պիտի ունենայ Բարիզի Ռեդիւ տէ Ռեդիւ հանգէսին ուղղութիւնը և մեծութիւնը (հարիւր էջերէ աւելի և մեծ ութաձալ դիրքով), պիտի հրատարակուի «Նոր Դար»ի թղթակից Պ. Հախումեանի տնօրինութեամբ եւ հայ ու օտարազգի գրողներու աշխատակցութեամբ:

Սեզ կը հաւատան թէ թերթի ապագան ապահովուած է արդէն: Աւելցնենք որ «Ժամանակ»ը գրական և գիտական հանգէս մը պիտի լինի և չպիտի պատկանի և ոչ մէկ քաղաքական, կրօնական եւ կամ ուրիշ կուտակցութեան: Ժամանակը ժամանակին պիտի յարմարի և ըստ այնմ առաջ ընթա. նայ: Եւսեփիոսի կը մաղթենք թէ իրենց շորորդ թերթին եւ երջանիկ ապագայ:

Ս. Դ.

ԼՈՅՍ ՏԵՍՍԻՍ Ե. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ
«ՆՈՐ ԸՆԹԵՐԹԱՐԱՆ»ԻՆ
Գ. ՏԱՐԻՆ

պ ա ո կ ե ռ ա զ ա ռ դ

Կըպարուանկէ բարոյական և իրագիտական կտորներէ զտնաքաղ մաթիւ ազգային շատ չահեկան նիւթեր. ինչպէս են, Հայոց կապաշտութիւնը, Ոսկեդար, Կիլիկիա, Ենթահայկ, Միւի, մերնախնաց առուտուրը, Հայրիկի և վարժապետ հանի Պատրիսթութիւնը, Հայոստանի որթերը և այլն և այլն, տղոց հասկալի կերպով բացատրուած Պիտի է 1 ֆր. Բ. տարիին. գինը 1 ֆր. Ա. տարիինը 60 սնթ, 20 օրի. նախի համար 15 0/0 զեղչ:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիզէ թղթակից մը կը գրէր թէ՝ լուր կայ որ Բիթերս պուրկէ հեռագիր հկած է Թիֆլիսի կառավարութեան փակելու հրոտարակէական ընկերութիւնը, որ ինչպէս յայտնի է ազգային, գրական, վիպական ու հայրենասիրական գործեր ու թարգմանութիւններ կը հրատարակէ:

— Ռուսահայ Թերթիւրու մէջ ալ զուէր սիրտ կը կարգանք հետեւալը. «Օրէնսդրութիւնների ժողովածու» մէջ հրատարակուած է կառավարչական 5 մի կարգադրութիւն, որով Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերութիւնը փակուած է:»

— Թիֆլիսի Թոմասեան ազգական մեծ վարժարանը, որ փակուած էր կառավարական հրամանաւ, այս օրերս կը վերաբացուի Ռուս կոթական Տիւնովեան վերին անօրինական ներքեւ: Բայց կառավարար Թոմասեանցի կողմէ կարգուած կառակատարողները Տրնօրէն տաճարկած են Պ. Յովհաննէս Թովհանէսեանը:

— Կովկասէ կը հեռագրեն «Անգլիացի աստուածագէտ Մ. Էտուարտ Լասի Կարթիկ կովկաս երթալով, Արարատ լեռան վերի գլխիցը ելնելու ձեռնարկեց, սակայն անհաջող թէ Նոյիան տապաւնին տանգութիւնը հաստատող ու եւրան մը կրնայ գտնիլ հան: Յիշեալ արահատագէտը 76 տարեկան մարդ մըն է որ մինչեւ 13000 ոտք ելնելէն ետք, որոշեց մնալ, ինչ որ տարուած թողուլ: 1901ի գարնան նոր պատրաստութիւններով պիտի ելնայ հան:»

— Պուլկարահայոց Այցելու հո

վիւ Գեր. Պողոսեան սկսաւ. 20ին Սօֆիա ժամանած է:

— Սօֆիայի Ազգ. վարժարանի ուսուցչուհիին պահանջի գտար Պուլկարական գտարարանի մէջ տեւողիւով, տեղւոյն թաղ. խորհուրդը գտարարարուած է վճարել յորդորդին պահանջած գումարը:

— Միզ հաղորդուած տեղեկութեան մը վրայ «Իրաւունք»-ի 55 թիւին մէջ գրած էինք քահանայի մը ազգական իբր որը, հակառակ իր հօր կամքին, 10 տարեկան համար Զմիւռնիոյ գերմանական սրբանոցին յանձնուիր, իր մօրեղբոր Պ. Յովէ կարինեանի կողմէ: Մեր տեղեկատուը կը յաւելուր թէ Պ. Յովէ ազգական 300 ոսկի ժառանգութիւնը իւրացնելու նպատակաւ այդ քայլը առած է: Բայց այսօր այդչ հաստատուող յորդորդէ մը մեզ չը տեղեկագրուի թէ՛ այդ ազգական մայրը մեռած ու հայրը զինք Զմիւռնիոյ տիրահաշտի չափազործ Ֆէրզըն անուն Ամերիկացիին սրբանոցը գրած էր: իսկ Ֆէրզըն ի սփրը հրապարակուելով, ազգական մօրեղբայրը Պ. Յովէ փութացած է խղճը պաշտպանելու շատ մը աշխատութիւններէ յետոյ յաջող ծէք Գերմանական որբանոցը ընդունելու առ, 10 տարեկան պայմանագրով: Ազգական քահանայ հայրը կը հակառակ իր աշխատութիւններէ այս կարգադրութեանը, և կը ջանայ ազգական տանի որբանոցէն:

— Տիֆլիզէ մեզ կը գրին թէ տեղւոյն Ազգ. վարժարանի անօրէն Պ. Շահրիմանի աշակերտ մը ծեծած ըլլալուն առթիւ հայտարար գտարարանին որոշած տուգանքը ընդունած է նախնական դատարանի մէկ նոր վճարով:

— Երօտն օլուքէն Պատիարքարան զրկուած հարազատութիւն մը կը յայտնէ թէ՛ տեղւոյն, Հապիպ լիւ և Քեապուրէի ազգայիններն հետզհետէ լատինաւորու վրայ են բանիբուն հոգեւոր հովիւ և վար

ժարան չունենալուն հետեւանօք այդ տեղերու աղքատիկ ուսանողները կը լատինական վարժարանները կը յաճախեն, ուր իրենց թէքեւատ, գասապիք և դիւրութիւն կը տրուին. ուսանողները լատինացի եկեղեցին կերթան դպրութիւնը ընկելու զոր աւելցնելու համար իրենց ծնվղըներն ալ հոն կը յաճախեն: Հանրագրութիւնը կը յայտնէ թէ՛ եթէ անմիջական կերպով վարժարան մը չի հաստատուել նոյնիկով մերը հետեւինք անդամները պիտի ըլլայ:

— «Նովոստի Ռուս» թիւթը կըսէ թէ վեհ. կաթողիկոսը իր անձնական տկարութեանը դարման մը փնտռելու համար մտադիր է այս ձմեռ Բէթէրապուրկ և Մօսկուա այցելելու, հոն ամենակարեւոր թիւղիներու հետ խորհրդակցելու մտօք:

— Ի Յիշատակ հանգուցեալ բարերար Գ. Զանչեանցի Պաթմաթի մէջ կատարուած հոգեհանգստի միջոցին ներկայ եղող հասարակութեան մէջ 500 յուզիլի հաւաքուած է ի նպատակ հայ որբանոցներուն: Այս գումարը անմիջապէս զրկուած է «Ռուսք» վետամուտ» յրազրի խմբագրութեանը որուն մէկ անգամ էր բարեկիշատակ Զանչեանը:

— Թիֆլիսի Ս. Գեորգի եկեղեցիէն մէկ արծաթապատ ուսանարանի զոյգող Յ. Աղամեանի գտար տեսնուելով, ամբաստանալը չքաւորութեան պատճառաւ զոյգալը խոտտովանած է: Գտարարանը գանի քաղաքական իրաւունքներէ զրկելէ զատ, Սիպերիոյ հեռաւոր վայրերը աքսորել վճարած է:

— Մասկուայի պաշտօնական շրջանակներու և հասարակութեան մէջ գրում կը հաւաքուի հանգուցեալ Գ. Զանչեանցի անունով «Ժողովրդական Գրադարան» մը հիմնելու համար:

— Բարիկիքադաքական գիտութեանց ազատ վարժարանի մէջ Անատոլ Լըռուա Պօլիօ այս ձմեռ պիտի գասախօսէ ի մէջի ալլոց Հայկական Եկեղեցւոյ մասին:

— Կարգ մը Գերմանացի գրագետներ մտադիր են եղեր Զանչեանի Եղբայրական Օգնութիւն ժողովածուին նման գիրք մը հրատարակելու անկէ գոյանալիք արդիւնքը Հայ որբանոցներու յատկացընել:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԼՕՐՏ ՍԱԼԶՊՐԻԻ ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ. — Լոնտոն հրատարակուող գրական փոքրիկ հանդէս մը հետեւեալ կարող հրատարակած է, որ Լորտ Սալզպրիի կողմէ գրական փոքրիկ աղումը մը մէջ արտասանուած է:

«Գիրք մը միշտ զիս դիւթած է եւ մէկէ աւելի անգամներ շատ կարուելէն անկողնէս հանած է, ալ գիրքը Ա. Տիւմայի Մօնթէ Բրիսթօն է: Քանի մը ամիս առաջ Սանտրիկամ կալէսի իշխանին գրեալը կը գտնուէի եւ ինչի հետ ունէի իմ սիրած Մօնթէ Բրիսթօն. առաջ մը ժամը 4 1/2ին ան կողնէս ելլելով գաղտնի էի գրեալին սքանչելի պարտէզը, հոն մէկ երկու ժամ գրքեր կարդալու համար: Հազիւ թէ կէս ժամ եղած էր կարդալ սկսելու, երբ ետեւէս ձայն մը առի որ կըսէր:

«Ինչ միթէ առաջին մինիստրը մը պաշտօնը այնչափ ծանր է որ նա պէտք ունենայ ամպի կանուիւն գործի սկսելու:

«Յետիս դարձայ եւ տեսայ որ կալէսի իշխանն էր:

«Իրենց ցոյց տուի զիս այնչափ կանուի անկողնէս հանող գիրքը. ուրուն համար ըսաւ թէ քանի որ այդչափ հետաքրքրաւոր է, ինքն ալ պիտի կարդայ:

«Երեք շաբաթ յետոյ իշխանը ինձ կըսէր. «Մօնթէ Բրիսթօն ձեզ ժամը 4 ու կէսին անկողնէս հանած էր, իսկ զիս այս առաւ մը 4ին հանել տտաւ:»

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՅԵՐ [21]

(ՊԱՏԿԵՐ ՄԵ ՏԱԶԱԿԱՆՈՍԱՆԻ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ)

Շատ անգամ ժամերով կը խորհէր, ու մտածման այն մոգիչ վայրկեաններուն, հայրենի գիւղը ու իրենց պապեանական տունը, Ստանա՛ տանտիկինի ու Շուշանիկի հեռագրակերի հետ: Իր երեւակայութեան մէջ որոշ կերպով պարզուելով, կատարելապէս գիտակից կրնէին գիրք իր վիճակին: Իր միտքը կը թռչէր հեռու, շատ հեռուներ, մինչ ան սարերն ու ձորերը, մինչ այն հովիտներն ու ձորերները, ուր անցուցած էր իր պատանեկութեան ոսկի օրերը: Պոլսոյ մէջ, բացի զպրոցէն ու գեթէն, չկար բան մը որ պատրէր իր առողջ միտքն ու խաթարէր անոր անկեղծ հոգին: Իր ամենէ սիրական ընկերները իր դրքերն էին, ու իր զբօսանաց ժամերը՝ ընթերցանութիւնով իր միտքը կազդուրելն էր:

Այսպէս, այս խանդավառ երեւակայութիւնով ու անախաղ աշխատութիւնով կը շարունակէր Գուրգէն: Ամալքիլի քննութիւնը կը կատարուէր, այն սարուան ընթացաւարտներու ամենէ առաջինը կը լինէր: Իր զպրոցական կիսնքի հրաժեշտով վերջին ճառը, այնքան կը խանդավառէ ու կը յուզէ ներկայ հանդիսականները, որ ամենքն ալ անով կը սկսին հետաքրքրուիլ: Փափագեան Էֆէնիսին իր «հուսկ բունք»ով մատնանիլ կընէ պէրճօրէն Գուրգէնի ժրպատութիւն ու պարծանքով կը շեշտէ անոր ըրած յառաջդիմութիւնը: Մրցանակաբաշխութեան այդ վերջին հանգէսին ներկայ ըլլալ նաեւ Շահէն հօրեղ

բայրը: Գուրգէն անուց հարուստ ծնողները՝ անսնկով այդ բարի համալը ու անկեղծ ցանկութեան իրաւական պաշտ, բնագրական ամենատաք համակրանքը ու պատկառանքը մը կը զգան անոր հանդէպ: Գուրգէն զպրոցի ընթացքը աւարտած, ինքնակալութեան փայտի վկայականը գրպանը, ամենառարկայի մէջ գովաւած, «Հայերէնի Պատմ. Աշխարհագրութեան» եւ Յիւստինիէնի համար՝ առաջին կարգի մրցանակներով վարձատրուած, սրտի կատարեալ գոհութիւնով, կը թողու կրթական այդ համեստ յարկը:

Հազիւ թէ մէկ երկու շաբաթներ կ'անցնէր այդ երջանիկ օրերու վրայ, որ, այնուհետեւ ալ Գուրգէն գործի ըլլալով, հօրեղբայր Շահէնի տաժանելի բեռը պիտի թիթեւնայ: Եւ մէկ երկու տարի երկուքը մէկտեղ պիտի ջանային թէ երկիրը իրենց տունը պահելու եւ թէ վաշխառու խաղաղեան եղբայրք բարեղուած պարտքը վճարելէ ետք Հայրենիք դառնալ: Գուրգէնի գործունէութիւնը ու «կանանջ» ու կարմիրը իրենց օճախին չուրջ տեսնելու, ու ամպէս մեռնիլ կերպէր Շահէն. օր մալ ինքզինք շատ տը կար զգուցիլ, իր խղճով անկողնէն չկրցաւ ելնել ու գործի երթալ: Այդ օրը մինչեւ իրկալի Գուրգէնը անոր անկողնի չուրջ կը դառնար. ամեն տեսակ խռովք կը տանի անոր: Իր ձեռքով տաք ապուր կ'եմէ, շատ կ'իմդրէ որ զգալ մը երկու խըմէ: Բայց Շահէնի ցուր երթալով կը սաստկանայ, ու խիստ տենդ մը վրայ կուգայ: Յաջորդ առաւ Գուրգէն իրեն ծանօթ երիտասարդ բժիշկը կը կանչէ. բժիշկը որ Փափագեան Լ. Ֆ. ի մրցուած ծանօթացած ու բարեկամացած էր Գուրգէնի, ու անոր յայտնած առողջ մտքերու ու տաժած լայն գաղափարներու համար չափազանց կը սիրէր զայն, անմիջապէս կը հե-

տելի Գուրգէնի: Գասարմ փաշայի Պալապան խանի մզլու ու տիտուր սենեակներէ միտն մէջ, երեք տախտակի կողորներով գետնէն քիչ մը վեր բարձրացած անկողնի վրայ պառկած՝ շատ խորունկ կը աղքատ Զօրեղբայր Շահէնը, իր մոլորուած ու կարօտալից աչքերը այդ մեղմող սենեակի թունաւոր մթնոլորտի մէջ բան մը կը փնտռէին կարծես, երբ սենեակի դուռը բացուելով Գուրգէն ու բժիշկը ներս կը մտնեն:

Բարեկամական ու պաշտօնական պարտականութեանց գիտակցութիւնով երկար կը քննէ բժիշկը այդ հեզ հիւանդը: Մէկ երկու թեթեւ գեղեր իր կողմէ զրկել խոտանալէ վերջ, Ֆրանսերէն Գուրգէնի կը յայտնէ որ, «հիւանդին վրայ եղած տենդը աղէկ հիւանդութեան մը նշան չէ, եւ թէ այդ սենեակի մէջ միտքը վառաւոր է, պէտք է անպատճառ հիւանդանոց փոխադրել զայն»: Բժիշկը իր խոտանալով գործածէ հորեղբայրը համար, բայց տենդը երթալով կը գործէ ու հիւանդութիւնը կը ծանրանայ: Բարեկամ բժիշկը յաջորդ առաւ զարձեալ կուգայ, հիւանդի վիճակը քննելէ յետոյ, վճռապէս կորոշէ հիւանդանոց փոխադրել զայն: Գուրգէն կառք մը բերել կուտայ: Գուրգէնի հետ մէկտեղ գնելով հիւանդը, ուղղակի ետէս Գուրգէն ազգ. հիւանդանոց կը զրքէ, կառքի եւ հիւանդանոցի մէկ մէջնոյ մուտքի ըստակը ինքը բժիշկը վճարելով:

ՀԱՅՐԵՆՈՒ Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

(Շարունակելի)

